Հ. Ե. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Վ. ՏԵՐՅԱՆԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՈՃԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վահան Տերյանի քնարերգության մեջ մենք ունկնդրում ենք «Թափառիկ երգչի երգը ցավագին», նրա «անանց հուսահատության երգը», զգում «անապավեն ու մոլոր կյանքի» կսկիծներն ու մրմունները, բայց և միաժամանակ տեսնում ենք ժողովրդի փրկության «Արևածագը», զարթոնքն ու մարտական ոգին, և անծայր գիշերների մռայլ խավարից ու մշուշներից մեր առջև հառնում է «Վերադարձ»-ի լուսավոր ուղիներով դեպի կյանք ու պայքար ընթացող խանդավառ բանաստեղծի կերպարը։ Գեղարվեստական արտահայտչական ձևերի բազմազանության և քնարական գունեղ ոճի շնորհիվ մենք ասես ականատես ենք լինում մենության սառը շունչն զգացող, «անպատմելի վշտով լցված» և «խենթ անկումի գերեզմանի խավարներում» գտնվող բանաստեղծի անուրջների մահվան մռայլ հանդեսին։ Սակայն դա իր հայրենիքի մխացող վերքերի ցավով տանջվող քնարերգուի հոգեկան ու կենսական վերածննդին նախորդող մի դժնի պահ է միայն, որից հետո նրա հոգում արձագանքում են անձնուրաց կռվի կոչերը, ազատության մարտիկների հզոր ոտնաձայները, և բանաստեղծ-քաղաքացին բոլորանվեր կերպով զինվորագրվում է ժողովրդի ազատագրության մեծ պայքարին։

Գեղարվեստական նրբերանգներով ու հնարանքներով հարուստ իր լեզվով ճշմարտացիորեն վերարտադրելով մարդկային հոգու մակընթացությունները ու տեղատվությունները՝ քնարերգուն մեծ վարպետությամբ ոչ ռելեֆ արտահայտչականությամբ կարողանում է գեղարվեստորեն ցուցադրել ներքնաշխարհի ամենախոր գաղտնայանները։

Մեծ քնարերգուն իր ստեղծագործական ակտիվում եղած բոլոր միջոցներն օգտագործում է. ներքնաշխարհի ամենաբարդ հուզավիճակները նրանց դինամիկ ամբողջականության մեջ ներկայացնելու համար։

Փոխաբերությունների ամենալայն կիրառմամբ հայ բանաստեղծական լեզուն հարստացնելով հանդերձ՝ Տերյանը գունագեղ արտահայտչությամբ վերարտադրում է իր ապրումներն ու տրամադրությունները։ Արտահայտչական հնարանքների կիրառման վարպետությամբ նա ոչ միայն պատկերավորություն ու գեղարվեստական շունչ է հաղորդում քնարական խոսքին, այլև տալիս է նկարագրվող միջավայրի առարկաների ու երևույթների շեշտված գնահատականը։

Տերյան-քնարերգուի խառնվածքային այս բոլոր գծերն ակնառու կերպով երևան են գալիս և՛ մակդիրներում, և՛ համեմատություններում, և՛ մետաֆորներում, և՛ այլ փոխաբերությունների ու պատկերների մեջ (շնչավորում, անձնավորում և այլն)։

Վ. Տերյանի բանաստեղծական լեզվի հարստությունն են կազմում գունեղ մակդիրները, որոնք լեզվի գեղարվեստականության ու արտահայտչականության կարևորագույն գործոններից են։ Նրա քնարական ստեղծագործությանը բնորոշ է այնպիսի մակդիրների հաճախակի գործադրումը, որոնք խորապես պատճառաբանված են քնարերգական թեմայով և մեղմ-հուզական իրավիճակով։

Բազմերանգ ու բազմանշանակ մակդիրներով Տերյանն արտահայտում է հերոսի կամ զրուցակցի գործողությունները, արարքները, նրանց հետ կապված դեպքերը, իրադարձությունները։

Առանձնակի արտահայտչական թարմություն են մտցնում ժողովրդական մակդիրները։

Օրինակ՝

Անտրտունջ է լալկան ուռին,
Ուռին առվի եզերքում...
(Վ. Տերյան, Երկերի ժողովածու, 1950 թ., հ. 1, էջ 162)[1]։

Սև օրերս այրեցիր
Գեղեցկությամբ ու սիրով... (էջ 196)։

Որոշ մակդիրներ վառ և գունեղ կերպով կենդանագրում են նկարագրվող առարկաները։

Օրինակ՝

Մայրս ուներ ձեռներ բարակ,
Մոմե մատներ երկար ու նուրբ... (էջ 285)։

[1] Հետագա բոլոր մեջբերումները կատարված են նույն հրատարակությունից։

Բարակիրան նախրուհին ինձ ժպտաց,
Նախրուհին տխուրաչյա և համեստ... (էջ 300)։
Նա ուներ խորունկ երկնագույն աչքեր,
Քնքուշ ու տրտում, որպես իրիկուն... (էջ 8)։

Ինքնամոռացության պահերը նկարագրելու համար բանաստեղծը կիրառում է հիացական մակդիրներ։

Օրինակ՝ Դյութեցին ինձ քո մազերը ալեծածան
Եվ աչքերիդ խորությունը խորախորհուրդ... (էջ 70)։

Արտաքին տպավորության գնահատականը սովորաբար տրվում է «լուսեղեն», «հրաշք» և այլ մակդիրներով։ Ներքին հոգեկանի գնահատականը տրվում է «ամոքիչ» և այլ մակդիրներով։

Բանաստեղծության մեջ արտահայտված իրականության սահմանները հաճախ տատանվում են գիտակցության ու երազի միջև։

Օրինակ՝ Իրիկնաժամի կիսախավարում,
Կապույտ լույսերի ցոլքերում ճոճուն,
Հայտնվում է նա, մեղմագին փարվում,
Գունատվում է լուռ ու էլ չի շնչում... (էջ 183)

Երազի և քնարերգական այլ թեմաների մեջ բացահայտվում է ապրումների ու զգացումների ներքին խորհրդավոր աշխարհը, որին ներդաշնակում են քնարական մեղմ տրամադրություն և անորոշ զգացումներ առաջացնող մակդիրները, ինչպես օրինակ, ճեմիսլյային առավոտ, խորհրդավոր գիշեր, ոչ-երկրային արբեցումներ, խորհրդավոր արշալույս, ճեռավոր երազ, ցնորք, անուրջ, կախարդական շղթա և այլն։

Տերյանի գեղարվեստական ոճի մեջ ցայտուն կերպով գծագրվում են անսահմանություն արտահայտող մակդիրները՝ անճուն, անունջ, անճաս, անճայտ, անվերջ, անսահման և այլն։

Օրինակ՝ Օ, անճուն գիշեր, քեզ ո՞վ է փռել... (էջ 116)
Անճաս ցնորք իմ հոգու... (էջ 125)

Զգալի կիրառություն ունեն ինչպես ան, այնպես և չ, դժ ժխտական նախածանցներով կազմված ածականները և բայերով կազմված որոշիչները։

Օրինակ՝ Երեկոն վառեց լույսեր դժգունակ... (էջ 44)
Զարտասանված տխուր խոսքեր... (էջ 11)

Բանաստեղծն առանձնահատուկ սեր է տածում դեպի հուզական մակդիրները։

Օրինակ՝
Քնքո՛ւշ դու, լուսե աղջիկ ես,
Արտո՛ւտ ես, ոսկե թռչնակ ես... (էջ 262)

Արդյոք ո՞վ գիտե անունդ անուշ... (էջ 77)
Իր հուրը վառեց պայծառ մի կարոտ... (էջ 207)
Մի քաղցր վիշտ է մեղմաբար խոսում... (էջ 117)։

Մակդիրների առատությունը Տերյանի բանաստեղծական լեզվին հաղորդում է առանձին պատկերավորություն, դրամատիկական շունչ, որոնք ուժեղացվում են շարահյուսական բարդ կազմությունների մեջ մեծ արտահայտչություն ունեցող տրամաբանական շեշտերով։ Քնարական ապրումը, որը հանդես է գալիս որպես հոգեկան աշխարհի լրիվ արտացոլման կոնկրետ պատկեր, լիովին արտահայտվում է բանաստեղծի մեջ։ Շնորհիվ հուզական ինտոնացիայի, բառակրկնությունների, բացականչությունների, հարցումների և այլն, ստեղծվում են ներդաշնակ ռիթմ և հուզական բարձր լարում։

Համեմատությունները կազմում են Վ. Տերյանի բանաստեղծական ոճի բնորոշ գծերից մեկը։ Այդ համեմատություններից են կցական համեմատությունները, որոնց գործածությունը Տերյանի ստեղծագործության մեջ յուրահատուկ բնույթ ունի և տարբերվում է նրա նախորդների կիրառած կցական համեմատության ձևերից։ Բանաստեղծության տներում նրանք առաջ են բերում հավասարեցման զուգահեռականություն (պարալելիզմ), որը բաղկացած է խիստ հատկանշական արտահայտչություն ունեցող երկու իմաստակից զուգաշարքերից։ Կցական համեմատության մեջ հավասարեցումները միմյանց հյուսվում են ոչ թե իրային-տրամաբանական կապով, այլ միայն նախորդող կամ հաջորդող պատմողական հենքի վրա։ Կցական համեմատության միջոցով բանաստեղծը հաճախ տալիս է մարդկային կյանքի ու բնության զուգահեռականությունը, որը ներքնապես խոր կերպով պատճառաբանված է քնարական մտահղացման նրբազեղ բնույթով։

Օրինակներ՝

Եվ ինչ որ կար չար, ատելի ու վատ—
Անցել է, որպես մշուշը սարից.
Այդպես հոգին է բացվում անաղարտ,
Թափելով աղտն ու ծնվելով նորից (էջ 358)։

Ես դեռ պատանի սիրեցի քո խիստ
Ցուրտ, հյուսիսային մտազուսպ լեզուն,
Եվ տեսա՝ որքա՜ն ահեղ է կիզում
Կրակը թաքուն տողերից հանգիստ։

Այդպես ափերում իր կանաչանիստ
Իմ հեռու երկրում Արազն է հոսում,

Եվ այնպես, այնպես հանդարտ է խոսում,
Թաղած իր խորքում մրրիկն անհանգիստ (էջ 374)։

Բանաստեղծի՝ նմանական զուգորդությամբ կատարած համեմատությունները համապատասխանում են բանաստեղծության ընդհանուր քնարական տրամադրությանը և ծառայում են երկի ներքին-գեղարվեստական առաջադրանքին։ Նրանք վերցված են բնությունից կամ հենց նույն քնարերգական միջավայրից, որի մեջ գտնվում է համեմատվող առարկան կամ երևույթը։ Սակավադեպ են միևնույն միջավայրի առարկաների ու երևույթների համեմատությունները միմյանց հետ։ Հոգեկան աշխարհի երևույթներն ու առարկաները համեմատվում են մեծ մասամբ բնության առարկաների ու երևույթների հետ։

Մարդու ներքնաշխարհի և բնության զուգընթաց նկարագրությունը տրվում է այնպիսի գունեղ բառերով ու արտահայտություններով, որ զգացվում է բնության և մարդու սրտի յուրաքանչյուր բաբախումը։

Համեմատությունների ցայտուն զուգահեռականությունները ստեղծում են կոմպոզիցիոն համաներդաշնակում, սյուժետային կուռ միասնություն ու հետևողականություն, որոնց շնորհիվ աճում է գեղարվեստական երկի հուզական ներգործությունը։

Այսպես, օրինակ, «Հրաժեշտ» բանաստեղծության մեջ՝

Դու գնում ես՝ չգիտեմ ուր,
Լուռ ու տխուր,
Հեգ գունատվող աստղի նման։
Ես գնում եմ տրտում-մենակ,
Անժամանակ
Մաղկից ընկած թերթի նման... (էջ 7)։

Համեմատությունները հիմնվում են բնության, քաղաքային և այլ պեյզաժների վրա և նշում առարկաների, իրերի, մարդկանց, երևույթների անսպասելի նմանությունները (համընկնումները)։ Նրանք նկարագրությանը հաղորդում են գունագեղ պատկերավորություն։

Անսպասելի համեմատություններն ուժեղացնում են բանաստեղծությունների ներգործությունը, ապրումների, հույզերի արտահայտությունը։

Օրինակ՝ Մռայլ թաղումի ջահերի նման
Մեկը աստղերն է վառում տխրությամբ... (էջ 69)։

Համեմատությունները շատ անգամ ծառայում են որպես անցում՝ իրերի, առարկաների նկարագրությունից դեպի հոգեբանական

բարդ ապրումների նկարագրությունը, կապված սյուժետային իրադրության այս կամ այն հատվածի հետ։ Այսպիսի դեպքերում համեմատությունը դառնում է նկարագրական և կազմակերպական մոմենտ։ Օրինակ՝

Մեղմ զիշերի գեղագանգուր երազում՝
Այն աստղերը, որպես մոմեր սրբազան,
Առկայծում են կարոտագին, երազուն՝
Հավերժաբար իրար կապված և բաժան...

Սա ու դու էլ շղթայված ենք իրարու,
Կարոտավառ երազում ենք միշտ իրար,
Միշտ իրար հետ, բայց միշտ բաժան և հեռու,
Աստղերի պես և հարազատ, և օտար... (էջ 33)

Մոտեցած երկնից աստղերը պայծառ
Ժպտում են խաղաղ քո աչքերի պես.—
Իմ լքված սրտի կարոտը անծայր,
Ամեն ինչի մեջ որոնում է քեզ (էջ 16)։

Այս համեմատություններն զգալի չափով տարբերվում են սովորական արտաքին համեմատություններից։

Արտաքին և ներքին համեմատությունները Տերյանի բանաստեղծությունների մեջ երբեմն համադրվում կամ ձուլվում են, հանդես գալիս միասնաբար։

Օրինակ՝ Ամպերը ճերմակ երամով անցան,
Թռչունների պես,— լուսեղե՞ն երազ,—
Դու ես, որ դարձյալ ժպտացիր անձայն
Քո հեռու հեռվից, անհայտ ու անհաս... (էջ 201)
...Եվ որպես վճիտ լճերն են ցոլում
Ցրտում աշնային — մշուշների տակ,
— Դու էլ, սիրտ, մնա հարության գալուն
Տրտմությամբ անչար, և՛ խոր, և՛ հստակ...
Կանցնեն հուշերդ — մշուշների պես,
Կգա խնդություն — խոր ու անարատ,
Կցրե մեգն ու կզարդարե քեզ —
Որպես երկիրն իմ — արեգակն առատ... (էջ 99)

Սավալուն համեմատությունները հանդիպում են գերազանցապես այն բանաստեղծություններում, որոնք մեծ մասամբ գրված են ազատ ոտանավորների ձևով, ազատ չափով («Հատված» և այլն)։ Ստեղծվում է մարդու և բնության, ներքին և արտաքին աշխարհ-

ների միաձույլ պատկերը, որը հիմնականում ծառայում է բանաստեղծի մտահղացումը լրիվ արտացոլելու և ուժեղ արտահայտչական միջոցներով այն մարմնավորելու համար։ Եվ արդարև, բանաստեղծին հաջողվում է հոգեկան և նյութական աշխարհների կոնկրետ-զգացողական ձևերի նուրբ համադրությամբ լիովին բացահայտել իր ապրումը։

Բերենք օրինակներ՝ Քար էր իմ սրտում, և ծա՛նր, և ցո՛ւրտ,
Եվ աշխարհն էր քար՝ սառն ու անխորհուրդ...
Երկինքն էր լալիս պաղ արցունքներով,
Լալիս էի ես մերժված ու խռով... (էջ 148)
Եվ գերեզմանի խորշը ցրտաշունչ
Անուշ թվաց ինձ,
Որպես մայրական գիրկը սրտամոտ
Պայծառ օրերում,
Որպես հեռավոր երկրում մոռացված,
Մայրական երգի սիրով օրորվող
Թովիչ օրորան (էջ 149)։

Տերյանի քնարական ոճի մեջ մեծ դեր են խաղում շնչավորման և անձնավորման պատկերները։ Բանաստեղծն իրեն հատուկ ջերմությամբ շնչավորում է բնության երևույթներն ու առարկաները՝ առավել գունեղ ու պատկերավոր դարձնելով իր ապրումների նկարագրությունը։ Բնության առարկաների ու երևույթների անձնավորման միջոցով ստեղծվում են գեղարվեստական երկի ընդհանուր ոգուն ձուլվող ցայտուն, տպավորիչ պատկերներ։

Օրինակներ՝ Սարի ետևում շողերը մեռան,
Անուշ դաշտերը պատեց կապույտ մեգ.
Տխուր երեկոն զարկել է վրան.
— Սիրտս կարոտով կանչում է քեզ՝ եկ (էջ 55)։

Աստղերն են ժպտում լուսեղեն նազով,
Խաղաղ դաշտերը մութն է համբուրում...
. . . . . .
Մոտեցած երկնից աստղերը պայծառ
Ժպտում են խաղաղ քո աչքերի պես... (էջ 16)
Հողմն է լալիս թփերում
Մերկ ու վտիտ... (էջ 111)
Ամպոտ երկինքը մեռած լույսերի
Թաղումն է սգում... (էջ 47)

Մետաֆորների առատությունը Վ. Տերյանի բանաստեղծությունների մեջ պայմանավորված է նրա ստեղծագործական մտահղացումների նրբազեղ բնույթով։ Բանաստեղծը լայնորեն կիրառում է տեսողական, լսողական, շոշափական, շարժման, հուզական, մտավոր, կամային և այլ պատկերներ, որոնց տարբեր կողմերը գտնվում են փոխազդեցության մեջ և ունեն մետաֆորական կամ մետոնիմիական կազմություն։ Նրանք երբեմն հաջորդում են միմյանց և փոխանցվում մեկը մյուսին՝ ստեղծելով հուզական գունեղություն և բազմազանություն։

Պարզ ջրի վրա եղեգը հանդարտ
Անդողդոջ կանգնած է՛լ չի շշնջում,
Լռին խոկում են երկինք, գետ ու արտ,
Եվ ոչ մի շարժում, ու ոչ մի հնչյուն... (էջ 3)

Հեռավոր մարդոց ցավերը կզգամ,
Կարկաչող ջրի լացը կլսեմ.
Հողը կգրկեմ, ջերմ կհեկեկամ,
Վառ աստղերի հետ անուշ կերազեմ... (էջ 49)

Գիշերվա հովն էր լալիս դաշտերում,
Մութ հեռաստանն էր դժկամ նայում ինձ... (էջ 19)
Արիացիր, սիրտ իմ, ե՛լ հավատով տոկուն,
Կանգնիր հպարտ, որպես լույս, լեռն է մեր կանգուն...
(էջ 321)։

Մետաֆորական պատկերները ոճական խոշոր դեր են խաղում Տերյանի ստեղծագործության մեջ՝ արտահայտելով առարկաների ու երևույթների բանաստեղծական որոշակի կենդանությունը, քնարերգական հերոսի ապրումների ու տրամադրությունների հուզական նրբագեղությունը։ Մետաֆորները Տերյանի ստեղծագործության մեջ հատկանշվում են ներքին-զգացողական արտահայտչականությամբ և գեղարվեստական ներթափանցման ուժով։ Բարդ իրադրությունների մետաֆորական նկարագրությամբ խոսքի արվեստագետն արտացոլում է ներքին ու արտաքին իրականությունը և նրանց միջև եղած փոխադարձ իմաստային կապը, ինչպես, օրինակ, հետևյալ բանաստեղծների մեջ.

Ջրերը մեղմիվ երգում են օրոր,
— Սիրտ իմ, հանդարտի՛ր... (էջ 115)
Երգում է քամին, լալիս է նորից,
Անհույս ու անվերջ մղկտում է նա.—

Այս մութ գիշերում այնքան կա թախիծ,
Այնքան տրտունջ ու գանգատ կա հիմա... (էջ 131)

Ինչպես տեսնում ենք, բանաստեղծը մի առարկայի հատկանիշը վերագրում է մի այլ միջավայրի առարկայի և այդպիսով, միջնորդված նկարագրության միջոցով հաղորդում ամենանուրբ և լարված ապրումներն ու զգացումները։ Վերջիններս հաճախ տրվում են հուզական պատկերների, հարցումների ու բացականչությունների զուգակցումով։

Այսպես օրինակ՝

Խորհրդավոր է երկինքն երազում.
Վարսաթա՜փ ուռի, դողդոջո՜ւն եղեգ.
Արծաթ խոսքերով աղբյուրն է խոսում.
— Սիրտս կարոտով կանչում է քեզ՝ եկ...

Ծաղիկներն ահա քնքուշ փակվեցին,
Բացվեցին երկնի ծաղիկներն անհաս.
Սև տագնապները իմ սիրտը լցրին.
— Արդյոք ո՞ւր ես դու, իմ անուշ երազ... (էջ 55)

Իր հոգու ներքին հարուստ բովանդակությունն արտահայտելու համար բանաստեղծը երբեմն դիմում է վերացական մետաֆորների՝

Հարուստ է պոետն այնքան
Երկրի մթին բանում...
Ջոնի և պարսից արքան,
Որքան պոետն անքուն... (էջ 247)

Հեռավոր, անել լեռնագագաթներ,
Պայծառ արևի գաներ հիասքանչ,
Սիրտս մեռնում է, լեռնագագաթներ,
Ներքևում նիրհող դաշտերում կանաչ... (էջ 53)

Բառերի մետաֆորական կիրառություններով Տերյանը միմյանց է մոտեցնում ամենատարբեր երևույթները, հատկանիշներն ու գործողությունները՝ ետ մղելով իրերի շարժման օբյեկտիվ հատկանիշները։

Հեռու երկրի լուսե հովտում
Օրերն ուրիշ երգ են հյուսում... (էջ 80)
Մեգն է գրկում ինձ, հողմն օրորում... (էջ 348)
Խաղաղ դաշտերը մութն է համբուրում... (էջ 16)

Բանաստեղծը մետաֆորի արտահայտչական հնարանքն օգտագործում է գլխավորապես իր քնարական մտահղացումն ավելի ցայ-

տուն կերպով շեշտելու և ընդգծելու համար։ Ուժեղ արտահայտչության և հուզական աստիճանավորման շնորհիվ ստեղծվում է պաթետիկ-խռովահույզ տրամադրություն՝ համաներդաշնակելով բանաստեղծության սյուժետային զուգահեռագծերին։

Վահան Տերյանի ստեղծագործական-քնարերգական խառնվածքն ամենաբնորոշ կերպով արտահայտվում է հակադրությունների (անտիթեզ) մեջ, որոնցով չափազանց հարուստ է ռուս մեծ քնարերգակ Լերմոնտովի ստեղծագործությունը։ Տերյանը մեզ մոտ նույն դերը խաղաց մեծ վարպետ Խաչակյանի հետ միասին, ինչ որ Լերմոնտովը՝ ռուս քնարերգության մեջ։ Ինչպես Լերմոնտովի, նույնպես և Տերյանի ստեղծագործության մեջ հակում է նկատվում հոգու աշխարհը տալու յուր ամբողջությամբ՝ յուր ողջ հակասական էությամբ։ Հայտնի է Լերմոնտովի «Առագաստ» բանաստեղծությունը, որը քնարական հակադրության լավագույն մի նմուշ է։ Տերյանը մեծագույն չափով սովորեց եղբայրական ռուս ժողովրդի գեղարվեստական խոսքի վարպետներից և մեր գրականության մեջ զարգացրեց ռուս առաջավոր գրականության լավագույն տրադիցիաները։ Նա ստեղծեց այնպիսի հակադրություններ, որոնք բացահայտում են սուր-հոգեբանական մոմենտներ։

Ես ու դու էլ շղթայված ենք իրարու,
Կարոտավառ երազում ենք միշտ իրար,
Միշտ իրար հետ, բայց միշտ բաժան և հեռու,
Աստղերի պես և հարազատ, և օտար... (էջ 33)

Տերյանի ստեղծագործության մեջ առանձնապես բնորոշը ռևոլյուցիոն բովանդակություն ունեցող հակադրություններն են, որոնց միջոցով արտահայտելով դեմոկրատական մտավորականության իղձերն ու մտորումները և ժամանակի առաջավոր գաղափարախոսության որոշ մոմենտներ՝ նա բոլշևիկյան չերմ շնչով պայքարում է տիրող ռեակցիոն կարգերի, հակառևոլյուցիոն ուժերի դեմ։

Այսպես, օրինակ՝

Մահու պես դաժան ձմեռն է իջել,
Մարել են, մեռել — երգ, ծաղիկ ու բույր.
— Դու քար ցրտում էլ, ձյունների մեջ էլ,
— Հավետ կենդանի, կարկաչո՞ւն աղբյուր... (էջ 87)

Նոր օր է բացվում աղգերի համար,—
Իմ հայրենիքում տիրում է գիշեր,
Իմ հայրենիքում անթափանց խավար.
Ցարթե՛ք, վե՛ր ելեք, կենդանի ուժեր... (էջ 322)

Որոշ բանաստեղծություններում տրվում են սոցիալական ներհակ խմբավորումների և նրանց շահերի սուր հակադրությունը, բախման որոշ մոմենտներ և ռևոլյուցիոն պայքարի կոչ։

Օրինակ՝ Արևն արթնացավ, արևը մեզ ինչ,

Նա մեզ չի բերում իր ջողերը ջինջ,
Մեր վրա մռայլ կամարն է հեգնում,
Անսիրտ մեքենան ելնում ու ընկնում։
Գիշերն է իջնում հեզ ու հանդարտիկ,
Գազանն է ննջում, ննջում են մարդիկ,
Անվերջ կարիքն է մեր դուռը բախում,
Սովից մեր հոգնած սիրտը նվաղում։

Անվերջ աշխատիր, տանջվիր անդադար,
Ու աշխատանքդ ուրիշի համար,
Բավական է, վերջ. մենք էլ չենք ուզում
Սիրո երգ, անրջանք, վայելք ու հուզում,
ՀԵՐ կաց, իմ ընկեր, վե՛ր կաց, մուրճդ առ,
Նոր կյանք, նոր վայելք կռենք մեզ համար... (էջ 104)

Արձագանքվում են ամեն կողմերում
Մեր խրոխտ կանչի երգերը հզոր,
Վերջին տրտմության գիշերն է այսօր,
Մենք ձեր մութ կյանքին լույսեր ենք բերում...
Սև քաղաքներում գիշերն է ջնջում,
Տանջանքն է սողում սև օձի նման,
Մեր ամբողջ կյանքը տանջանք է միայն,
Մենք չենք տրտնջում, իրար ենք կանչում։
Մենք ձեռք ենք մեկնում, կանչում, ականջում,
Մեր ընկերներին՝ պայքարից հոգնած,
Մեր ընկերներին՝ մռայլում քնած,
Վերջին զայրույթի զանգն է ղողանջում... (էջ 331)

Ռեալիստական խոր շնչով են տոգորված և գեղարվեստական մեծ ճշմարտացիությամբ օժտված Վ. Տերյանի այն բանաստեղծական հակադրությունները, որոնք գրված են ռևոլյուցիայի տեղաբվության ջրջանում, երբ ինքնակալական սև ռեակցիան դաժան հաշվեհարդար տեսավ ռևոլյուցիայի ամերկյուղ մարտիկների հետ՝ նրանց անմեղ ու արդար արյամբ ողողելով ժողովուրդների բանտ ցարական Ռուսաստանը և քշելով նրանց հեռավոր աքսորավայրերը։

Այսպես, օրինակ, «Աքսորավայրում» և «Նոկտյուրն» բանաս-

տեղծություններում ռևոլյուցիայի երգիչը թանձր ու մռայլ գույներով պատկերում է տիրող ծանր, կոշմարային իրականությունը, սակայն խոր հավատով է լցված դեպի ռևոլյուցիայի ապագան, դեպի նրա հաղթությունը և հուսավառ սպասում է ազատության այգաբացին.

Լուռ է գիշերը։ Սառույց է ու ձյուն...
Պաղ լուությունը մռայլ է ու չար.
— Զարթիր, ըղձալի գարնան շառաչյուն,
— Պայթիր, փոթորիկ, կարող ու պայծառ։
Լուռ է երկիրը։ Երկինքը ամպոտ.
Մեկը թախծագին նայում է հեռուն,
Մեկը կանչում է՝ «Զարթի՛ր, առավոտ»,
Ու շղթաներով աղմուկ է հանում...
Ու մի արձագանք... գիշեր է ու ձյուն...
Հանգիստ ննջում է մռայլ շրջական,
— Շողա, վրեժի մահաբեր դաշույն,
— Հնչիր, փոթորիկ ժողովրդական... (էջ 103)

Տերյանն ունի հաջողված ներքին-քնաբերգական հակադրություններ, օրինակ՝ հեռավոր թագուհու և մոլորված ճամբորդի թեման։ Այսպես՝ «Մոռացած ուղի» բանաստեղծության մեջ.

Հեռու դղյակի քնքուշ թագուհին
Ծաղիկների մեջ, լուսեղեն այգում
Շրջում է և ինձ կանչում է կրկին,
Ցերեկը տրտում, գիշերը անքուն
Հեռու դղյակի քնքուշ թագուհին։

. . . . . .

Հիմա չգիտեմ այն լուսե ուղին,
Բայց զգում եմ դեռ, զգում եմ՝ ինչպես
Հեռու դղյակի քնքուշ թագուհին
Կանչում է ինձ միշտ, կանչում է, բայց ես
Արդեն չգիտեմ այն լուսե ուղին... (էջ 110)

Մի այլ օրինակ։ Բանաստեղծը գտնվում է խավար անդունդի մեջ, իսկ հեռավորը՝ լուսավոր աշխարհում.

Ես ընկա անդունդները խավար,
— Իմ ցնորք, նորից քեզ եմ կանչում.
Մոռացա ուղիներս պայծառ,
Իմ սրտում դառը մութն է ջնջում։

Դու անմութ աշխարհում ես ապրում,
Հիշի՛ր դու խավարում տանջվողին,
Քո սրտում արևներ են վառվում,
Արևիր սև կյանքիս մութ ուղին։

Հավիտյան ինձ քո սերն է այրում,
Դու լուսե՞ղ... Ինձ խավարն է ճնշում,
Ես մեռնում եմ այս մութ վիհերում...
Հեռավո՛ր, քեզանից չեմ տրտնջում... (էջ 15)

Այս հակադրությունները պատկանում են Տերյանի ստեղծագործության վաղ շրջանին։ Նրանցում, ի տարբերություն ռոմանտիզմի բովանդակություն ունեցող հակադրությունների, տրված են բանաստեղծի հուսալքումն ու հոգեկան տվայտանքները՝ պեյզաժի մռայլ գույների ֆոնի վրա, որն ավելի է խտացնում ներքին խավարը։ Սիրած աղջկա լուսեղությունը հակադրված է շրջապատում տիրող գիշերին և նրա հոգում նստած անթափանց խավարին։ Եղերերգական բնույթի հակադրություններում գեղարվեստորեն մարմնավորելով պատկերների սուր հուզական բախումները և առաջացնելով դրամատիկական ուժեղ լարում, Տերյանն առանձնահատուկ նրբազեղությամբ բացահայտում է ռեալ դրությունների ու գործողությունների հակադրությունը։

Երբեմն հակադրությունների միջոցով բանաստեղծի քնարերգությունն արտահայտում է ներքին ու արտաքին աշխարհների միջև եղած հակասությունները։

Այսպես, օրինակ՝

Պայծառ են աստղերը,
Աստղերը ջղուն են,
Սրտում իմ ըստվեր է,
Խավար է հոգում իմ... (էջ 55)

Որոշ հակադրություններ, կոնտրաստային մետաֆորների միջոցով տալով բանաստեղծական մտահղացման նրբությունները, խոր կերպով արտացոլում են բանաստեղծի ներքնաշխարհը։

Օրինակ՝

Արեգակն ինձ չայցելեց խուցիս մեջ մթին,
Եվ երգերը մայիսյան չհասան ինձ, չհասան,
Քո ծիծաղը կարկաչուն հնչեց իմ սրտին,
Եկա՞ր անուշ, որպես երգ պայծառ մայիսյան...
Տես՝ ինչպե՞ս եմ հոգնել ես այս գրքերից հին ու նոր,
Խոսքերից այս իմաստուն, գիտություններից բյուր։

Ժպտա՛, անգին, ժպիտդ՝ խոր գրքերից խոր,
Խնգությունդ՝ ամոքիչ, զրույցդ՝ աղբյուր... (էջ 336)
Ողջո՞ւյն նորից ու նորից, նո՛ր խնդություն, նո՛ր թախիծ,
Եվ առավոտ անստվեր, և մեշգիշեր սևավոր։
Սի՛րտ իմ, բաց ես աշխարհի և շարի դեմ, սիրտ իմ՝ բա՛ց,
Աշխարհն՝ արև, աշխարհն՝ ամպ, սի՛րտ, աղբյուր ես դու զուլալ։
Վիճակված է հնչել — երգով խնդալ, երգով լալ։
Ու խնդում է լացդ պարզ և խնդումդ՝ լացի պես... (էջ 253)

Վ. Տերյանի ստեղծագործության մեջ լայնորեն սփռված են օկսյումորոնները, որոնցից մի քանիսը մոտենում են կատախրեզային։

Այսպես, օրինակ՝

Տանջիր ինձ վերջին քաղցր տանջանքով... (էջ 184)

Միշտ նույն հուշն է, հուշը նույն
Չքնաղ, գերող և չկա
Նրա թույնից անուշ թույն... (էջ 255)
Սիրտս լցված էր կարոտով հստակ,
Անուշ ցավով ու երգերով իմ հին... (էջ 185)
Կա խորհրդավոր, դյուրթող մի խավար,
Ուր բախտից քաղցր են տրտունջ ու տխրանք...
Մի քաղցր վիշտ կա անդարձ անցածում... (էջ 52)
Քաղցր սուտով կխաբես... (էջ 176)
Մեղմ կրակները ոսկե փոշում
Դառն են ժպտում քեզ, հիվանդ մանուկ... (էջ 348)

Օրինակներից երևում է, որ նրանցում բերված մակդիրներն իմաստաբանորեն հեռու են որոշվող բառերից, և նրանց միմյանց հետ կապում է միայն բանաստեղծի երկակի մոտեցումը երևույթներին ու առարկաներին, որի համաձայն նա առարկաներն ու երևույթներն օժտում է անհրաժեշտ-նոր գծերով, ըստ որում իր ուշադրությունը սևեռելով նրանց ոչ այնքան իմաստաբանական, որքան հուզական կողմի վրա։ Բառերի այսպիսի առանձնահատուկ գործածությունների և հոգեբանորեն գիտակցված ու նպատակադրված պատկերների շնորհիվ առաջ է գալիս որոշակի տրամադրություն՝ միջնորդված հուզական իրադրության պաթետիկ մոմենտներով։

Օկսյումորոնները արտահայտելով հոգեկան ապրումների, զգացմունքների հակասական բնույթը՝ տարբեր առարկաների ու երևույթների հատկանիշների մերձեցման ու համադրման միջոցով հանդես են գալիս հուզական ու իմաստային երկպլան արտահայտ-

չությամբ, որն ավելի ծավալուն և հարուստ է դարձնում բանաստեղծական պատկերների տարբեր կողմերի արտացոլումը։

Այսպես, օրինակ, հետևյալ բանաստողերում՝

Հրաշք-աղջիկ, դո՛ւ, միշտ ճաղթող ու միշտ ճեզ... *(էջ 37)*
Կանգնել ես որպես անճաղթ ճրապույր,
Մոտեցար ահա կարող ու խոնարճ,
Մթնում բորբոքվեց մի արնոտ ճամբույր,
Մեղքի պես բովիչ, ցավի պես խելառ *(Բանաստեղծություններ. 1940 թ., էջ 31)։*

Ինչպես տեսնում ենք, հակադրությունները Վահան Տերյանի բանաստեղծական լեզվի գեղարվեստականության ու արտահայտչականության կարևորագույն գործոններից են։

Այսպիսով, գեղարվեստական արտահայտչության ստեղծագործական-քնարերգական առաջադրանքը բանաստեղծն իրականացնում է տարբեր ձևերով ու եղանակներով՝ համեմատություններով, մետաֆորներով, մակդիրներով և այլ փոխաբերություններով և այլն։

Տերյանի քնարերգական ոճի զարգացման վերջին էտապն աչքի է ընկնում պատկերների բնորոշ խորացումով։ Բանատողերի ու տների իմաստային և հուզական փոխկապվածությունն ու փոխպայմանավորումը և փոխաբերությունները առաջացնում են բանաստեղծության կոմպոզիցիոն միասնություն։ Հատկապես սերը, մահը, վիշտը և այլ երևույթներն ու զգացումները համապատասխանեցվում են բնության զուգահեռ, համընթաց կամ նմանեցված երևույթներին և սրանց հետ միասին արտացոլվում կոմբինացված նկարագրության միջոցով։

Գարնան անուշ ծաղկանց պես, վարդերի պես հրահրուն,
Հողմով տարված հեռացան ու ինձ ոչինչ չմնաց...
Ձմեռ իջավ իմ գլխին, և ցուրտ, և խոր, և անդորր
Աղբյուրներս չորացան — ոչինչ, ոչինչ չմնաց...
(Վ. Տերյան, Երկերի ժողովածու, 1950 թ., հ. 1, էջ 236)։

Միտքն ու զգացմունքը բանաստեղծի երկերում կոմպակտ արտացոլում են ստանում շնչավորման մետաֆորների, համեմատությունների և այլ պատկերների ու փոխաբերությունների միջոցով։ Պատկերների հակադրություններն ավելի ցայտուն են դառնում և ձեռք բերում ընդհանրացման ուժ՝ ներքին և արտաքին աշխարհների բախումները դրսևորելով կոնկրետ-զգացողական ձևերի մեջ։

Իր ստեղծագործության ռևոլյուցիոն շրջանում բանաստեղծը մշակում, զարգացնում ու հարստացնում է գեղարվեստական արտահայտչության՝ սիմվոլիզմին հակադիր նոր ձևեր։ Տերյանը հրաժար-

վում է խոսքի արտահայտչության ու պատկերավորման ավանդական հնարանքների նվիրագործումից։ Գաղափարների, մտահղացումների, թեմատիկայի փոփոխման հետ միասին փոխվում է նաև համեմատությունների, մակդիրների, պատկերների ու փոխաբերությունների բնույթը՝ դուրս գալով նախկին ռոմանտիկական շրջանակներից և ձեռք բերելով ռեալ նկարագրության ուժ։

Г. Е. АЙРАПЕТЯН

О ФАКТОРАХ ХУДОЖЕСТВЕННОСТИ И ВЫРАЗИТЕЛЬНОСТИ ЯЗЫКА ЛИРИКИ В. ТЕРЯНА

Резюме

В статье дан общий анализ факторов художественности и выразительности языка лирики В. Теряна. Анализированы разновидности эпитета, сравнения, метафоры и других тропов и фигур. Всеми этими средствами Терян пользуется с большим мастерством, художественно иллюстрируя самые глубокие тайники внутреннего мира.

Обилие эпитетов придает поэтическому языку Теряна особую образность и мелодичность.

Сравнениями поэт проводит параллель между человеческой душой и природой.

Метафорическим применением слов Терян сближает самые разные явления и действия, отодвигая на задний план объективные признаки вещей. Метафорой поэт пользуется главным образом для четкого выявления своего лирического замысла.

Лирический темперамент Теряна самым характерным образом выражается в антитезах. Посредством антитез поэт дает полное художественное воспроизведение духовного мира человека со всеми его противоречиями. Среди антитез выделяются антитезы с революционным содержанием, которыми он борется против реакционного политического строя того времени. Поэт в своем творчестве художественно воплощает идею непобедимости революционных сил, борющихся за светлое будущее.

В лирике В. Теряна четко выделяются оксюмороны, которые выражают противоречивую сущность душевных переживаний человека; посредством сопоставления качественно различных признаков предметов и явлений, выявляется эмоциональная и смысловая двуплановость выразительности в лирике поэта.

Таким образом, В. Терян осуществляет творческую задачу художественной выразительности разными тропами и фигурами, в которых отражаются все черты его поэтического темперамента.